ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2020 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ, ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թ.-ի 1-ին կիսամյակում Սևան համայնքում աշխատանքներն ու ծրագրերն իրականացվել են՝ համաձայն համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, 2020թ. տարեկան աշխատանքային պլանի, համայնքի 2020թ. բյուջեի՝ հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, նախապես քարտեզագրված ծրագրային առաջնահերթությունները: Չնայած նոր կորոնավիրուսով պայմանավորված համավարակին, արտակարգ դրությանը՝ համայնքապետարանը փորձել է աշխատանքները և ծրագրերն իրականացնել առանց ուշացումների, պահպանել համայնքի բնականոն կյանքը:

Իրականացված աշխատանքների շնորհիվ գրանցվել են հետևյալ արդյունքները՝ ըստ ոլորտների և ուղղությունների:

Համայնքային բյուջե

Եկամուտներ

Համայնքի 2020թ. 1-ին կիսամյակի բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 84.5%-ով: 391.5մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 330.7մլն. դրամ, թերակատարումը կազմել է 60.8մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 5.0մլն. դրամ եկամուտների թերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը 55.8մլն. դրամ է:

Նախորդ՝ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 2.1%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 6.7մլն. դրամ:

2020թ. 1-ին կիսամյակի բյուջեի վարչական մասը կատարվել 98.5%-ով / պլան՝ 321.5մլն. դրամ, փաստացի՝ 316.6մլն. դրամ /: 2019թ. համեմատությամբ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 36.4մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2019թ. համեմատությամբ ավելացել են 13.0%-ով: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 94.8%-ով / պլան՝ 94.7մլն. դրամ, փաստացի՝ 89.7մլն. դրամ /: Նախորդ՝ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները թերակատարվել են 2.5%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումը պակաս է 2.3մլն. դրամով:

Վարչական բյուջեի եկամտատեսակների գծով նախորդ տարվա համեմատությամբ թերակատարվել են փոխադրամիջոցների / 40.8% /, շենք-շինությունների գույքահարկերը /8.0% /, հողի հարկը պակասել է / 35.9% /:

Բացառությամբ ոչ հարկային եկամուտների, մնացած եկամտատեսակների գծով ևս առկա է թերակատարում: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճ է գրանցվել շենք-շինությունների գույքահարկի, հողի հարկի, պետական տուրքերի և այլ ոչ հարկային եկամտատեսակների գծով:

Մնացած եկամտատեսակների գծով /փոխադրամիջոցների գույքահարկ, տեղական տուրքեր/ արձանագրվել է նվազում:

Համայնքի բյուջեի 1-ին կիսամյակի թերակատարման պատճառը օբյեկտիվ չվճարումներն են կապված առկա ժամանակաշրջանի հետ:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 20.2%-ով / ճշտված պլան՝ 70.0մլն. դրամ, փաստացի՝ 14.2մլն. դրամ /: Նախորդ՝ 2019թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի փաստացի եկամուտներն պակասել են 29.7մլն. դրամով կամ 67.7%-ով: Նման թերակատարումը պայմանավորված է 2019թ-ին պետական բյուջեից հատկացված 29.7մլն. դրամ սուբվենցիայով:

Ծախսեր

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2020թ. 1-ին կիսամյակի բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 75.4%-ով: 426.7մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 321.9մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 104.8մլն. դրամ, կամ 24.6% :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 86.6%-ով (պլան՝ 332.9մլն. դրամ, 288.5 փաստացի մլն. դրամ), թերակատարումը կազմել է 44.4մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 51.6%-ը կամ 148.9մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 72.2մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 62.5մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2020թ. 1-ին կիսամյակի բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով. կրթության ծախսերը՝ 95.3% , մշակույթի ծախսերը՝ 100.0%:

2019թ. համեմատությամբ 2020թ. վարչական բյուջեի ծախսերը ավել են կատարվել 29.3մլն. դրամ կամ 11.3%-ի չափով:

2020թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 35.6%-ով (պլան՝ 93.8մլն. դրամ, փաստացի ծախս՝ 33.4մլն. դրամ): Նախորդ՝ 2019թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով պակաս ծախսերը կազմել են 12.7մլն. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի ծախսերը պակասել են 27.6%:

Համայնքի 2020թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 29.9մլն. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար, այդ թվում նաև 2019թ.-ի պարտքերը շարունակվում են, ինչպես ծրագրային, այնպես էլ համայնքի բյուջեի հաշվին կատարվող ասֆալտապատման աշխատանքները:

Իրականացվել է շուրջ 19.0մլն. դրամի ասֆալտապատման աշխատանք:

Պարտքեր

2020թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը եղել են 50.7մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2020թ. ընթացքում մարվել է 17.8մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 17.5մլն. դրամ ճանապարհների հիմնանորոգման, և 0.3 դրամ՝ նախագծային աշխատանքների մասով:

2020թ. հունիսի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի պարտքը կազմում է 32.9մլն. դրամ, այդ թվում՝ 19.1մլն. դրամը՝ համայնքի ֆոնդային բյուջեի գծով. 2014-2016թթ-ից տեղափոխված ասֆալտապատման աշխատանքների համար պարտքեր:

Հողի հարկ և գույքահարկ

Համայնքի եկամուտների կենսունակ աղբյուրը իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի, գույքահարկի հարկման գործընթացից գոյացող գումարներն են: Այս ոլորտը կարիք ունի անընդհատ վերանայման՝ հարկման բազայում անհրաժեշտ փոփոխությունների ներառմամբ, համայնքում գործող ստորաբաժանումների հետ մշտական աշխատանքի միջոցով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող շենք- շինությունների համար գույքահարկի տարեկան պլանը նախատեսված է եղել 25.9մլն դրամ: Հավաքագրումը կազմել է 11.9մլն. դրամ / 92.0% /: Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, ըստ պլանային թվի, եղել է 4.3մլն. դրամ: 2020թ-ին հավաքագրվել է 2.8մլն. դրամ / 64.1% /, փոխադրամիջոցների գծով գույքահարկի

վճարումը կատարվել է 59.2%-ով. պլանային 42.3մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 25.1մլն. դրամ:

Առևտրի և սպասարկման գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 4.0մլն դրամի դիմաց կատարողականը կազմում է 3.4մլն. դրամ:

Պետական տուրքի գծով նախատեսված 4.5մլն. դրամի դիմաց մուտքագրվել է 4.4մլն. դրամ /99.2% /:

Նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների ֆինանսավորում և ծախսային մասեր

Համայնքում գործում է 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մանկապարտեզներում ծնողական վճարները զրոյացված են, և ֆինանսավորումն ամբողջությամբ կատարվում է համայնքի կողմից: Այս տարի, պայմանավորված արտակարգ դրության ռեժիմով և պարետատան ցուցումներով, մարտ ամսից դադարեցվել է ՀՈԱԿ-ների աշխատանքը: Չնայած դրան՝ պահպանվել և պահպանվում են ՆՈՒՀ-երի և արտադպրոցական հաստատությունների աշխատակիցների աշխատավարձերը, դրանք վճարվում են ամբողջությամբ և առանց ուշացումների:

Հ/Հ		2020թ-ի 1-ին կիսամյակի ճշտված ֆինանսավորման պլան	Փաստացի ֆինանսավորում	Տոկոսը
1	Նախադպրոցական կրթություն ընդամենը, որից	85.0	83.7	98.5
	թիվ 1 «Բողբոջ» մ/մ	18.0	17.1	95.0
	թիվ 2 «Զարթոնք» մ/մ	16.0	15.8	98.8
	թիվ 3 «Հեքիաթ» մ	24.0	23.9	99.6
	թիվ 4 «Գալիք» մ/մ	20.0	19.6	98.0
	«Գազարին» մ/մ	7.5	7.3	97.3
2	Արտադպրոցական կրթություն ընդամենը	48.0	47.4	98.8
3	Մշակույթի գծով ՀՈԱԿ-ներ	12.5	12.1	96.8
	Ընդամենը 10 ՀՈԱԿ-ի գծով	145.5	143.2	98.4

Քաղաքաշինություն

2020թ-ի 1-ին կիսամյակում աճուրդային կարգով օտարվել է բնակելի կառուցապատման 2573.6քմ, 583.2քմ հասարակական կառուցապատման տարածք:

Շարունակվել է ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գործընթացը: Ընդունվել է համայնքի ղեկավարի 24 որոշում, համաձայն որի՝ օրինականացվել են ավտոտնակ, տաղավար, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող վարչական շենքերում, բնակարաններում օրինականացվել են ինքնակամ կատարված ձևափոխման աշխատանքները:

Ընդունվել է հասցեի տրամադրման 57 որոշում, համայնքային բյուջե է մուտքագրվել 57.000 դրամ:

Տրվել է 19 շինարարական և մեկ քանդման թույլտվություն, տրվել է ճարտարապետահատակագծային 30 առաջադրանք:

Կայացվել է համայնքի ղեկավարի 11 որոշում հողի ուղղակի վաճառքի վերաբերյալ:

Կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 1 գործ, որի մասով համայնքի բյուջե է մուտքագրվել 200.000 դրամ:

Համայնքի ղեկավարի կողմից տրված թույլտվություններ

Համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակներում տրամադրված թույլտվությունների վիճակագրությունը 2020թ. 1-ին կիսամյակում ունի հետևյալ պատկերը՝

Քաղաքաշինության բնագավառ

- շինարարության թույլտվության տրամադրում - 21,
- քանդման թույլտվության տրամադրում - 1.
- ճարտարապետահատակագծային առաջադրանքի կամ նախագծման թույլտվության տրամադրում - 31.
- ավարտական ակտ /շահագործման թույլտվության/ տրամադրում - 2

ընդհանուր - 55

Առևտրի և ծառայությունների բնագավառ

- ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության տրամադրում - 29.
- ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության տրամադրում - 28.
- հեղուկ վառելիքի մանրածախ վաճառքի թույլտվության տրամադրում - 6.
- հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության տրամադրում - 5.
- քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար թույլտվության տրամադրում - 1

ընդհանուր - 69

2020թ. Հունվար-հունիս ամսիներին համայնքի ղեկավարի կողմից տրվել է 124 թույլտվություն:

Ներքին աուդիտ

Անցկացվել է 2 ներքին աուդիտ՝

1. «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ
2. «Սևանի թիվ 2 «Զարթոնք» մ/մ» ՀՈԱԿ

Համայնքում իրականացվում է երկու սուբվենցիոն ծրագիր

Սևան համայնքի առաջնահերթությունների մեջ կարևորելով ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգված և բարեկարգ տեսքը՝ այս տարի Սևան համայնքը ներկայացրել է ճանապարհաշինական երկու սուբվենցիոն ծրագիր, որոնք նախորդ երկու տարիներին իրականացված աշխատանքների օրգանական շարունակությունն են:

Սևան համայնքում այս տարի իրականացվում է երկու սուբվենցիոն ծրագիր: Առաջինը «Սևան քաղաքի Գրիբոյեդով և Նալբանդյան փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի վերականգնում և բարեկարգում» ծրագիրն է, որն արդեն Նալբանդյան փողոցի հիմնանորոգման բաղադրիչով մտել է գործնական փուլ, մեկնարկել են շինարարական աշխատանքները:

Նալբանդյան փողոցի հիմնանորոգումն ընդգրկում է Շինարարների-Նալբանդյան փողոցների խաչմերուկից մինչև Սայաթ-Նովա-Նալբանդյան փողոցների խաչմերուկ ընկած ճանապարհահատվածը:

Ծրագրի ընթացքում նախատեսված են ասֆալտբետոնե ծածկույթի ֆրեզում և նոր ծածկույթի տեղադրում /5322քմ/, քանդված եզրաքարերի ապամոնտաժում և նորերի տեղադրում /660մ/, դիտահորերի և անձրևաընդունիչների ապամոնտաժում և նորերի տեղադրում /24 հատ/, փողոցի անցումների գծանշումներ, ճանապարհային նշանների և ասֆալտե արգելակների տեղադրում, ինչպես նաև շինարարական մի շարք աշխատանքներ:

Նալբանդյան փողոցը համայնքի համար ունի կարևորագույն նշանակություն: Այս փողոցի հիմնանորոգմամբ, որը միաժամանակ անվտանգության և հարմարավետության երաշխիքներից է, ակնկալվում է հիշյալ տարածքում տնտեսական գործունեության ակտիվացում, մարդկանց շարժի ավելացում:

Այս օրերին ընթանում են հունիս ամսից սկսած շինաշխատանքները:

Շուտով կմեկնարկի ծրագրի մյուս բաղադրիչը՝ Գրիբոյեդով փողոցի հիմնանորոգումը:

Ներկայացված երկրորդ ծրագիրը «Սևան համայնքի 5 բակային ճանապարհների հիմնանորոգում»-ն է:

Սևան քաղաքի 5 բակային տարածքներն ընտրվել են՝ հաշվի առնելով այդ տարածքներում բնակվողների թվաքանակը, մարդկանց և ավտոմեքենաների երթևեկությունն ու շարժը, բակերի առկա տեխնիկական վիճակը: Սևան համայնքի 2-րդ և 3-րդ միկրոթաղամասերի, Շահումյան փողոց 35, 37, 37ա և Կարմիր բանակի փողոց 54, Նալբանդյան փողոցի 37, 39, 41, 43, 45, 47, 49, 51, Շինարարների 2 շենքերի բակային տարածքների ճանապարհների ասֆալտբետոնե ծածկույթի տեղադրումը, գոյություն ունեցող եզրաքարերի վերատեղադրումը, անհրաժեշտության դեպքում նոր եզրաքարերի տեղադրումը, դիտահորերի և ջրընդունիչների բարձրացումը կամ իջեցումը կապահովեն այդ տարածքների բարեկարգ տեսքը, որը տասնամյակներ շարունակ եղել է խնդրահարույց, իսկ մասնակի վերանորոգումները՝ կարճաժամկետ:

Շենքերի բակային տարածքները եղել են ասֆալտբետոնե ծածկույթով և բազալտե եզրաքարերով բարեկարգված:

Տասնամյակների ընթացքում ա/բ ծածկույթը քայքայվել է, կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, հարթեցվել են տարբեր տեսակի գրունտներով, որի պատճառով ծածկի նիշը բարձրացել է, և որոշ հատվածներում եզրաքարերը մնացել են լիցքի տակ:

Առաջնահերթություն ներկայացնող այս ծրագրի իրականացմամբ Սևան քաղաքի 5 բակային տարածքներում կապահովվի բարեկարգ և ներկայանալի տեսք, որը

միաժամանակ հարմարավետության, անվտանգության երաշխիք է: Օրենսդրությամբ սահմանված կարգով առաջիկայում կհայտարարվի ծրագրի իրականացման մրցույթը, որին էլ կհաջորդեն շինարարական աշխատանքները:

Ծրագրի նախնական արժեքը 151.125.700 դրամ է:

Ծրագրի իրականացման համար հայտարարված է մրցույթ:

Փողոցների մասնակի ասֆալտապատում

Բարեկարգ, ներկայանալի փողոցներն ու ճանապարհները յուրաքանչյուր համայնքի այցեքարտն են:

Փոսալցման աշխատանքները ներառել են Սևան քաղաքի և Գագարին գյուղի շուրջ 15 փողոց: Իրականացվել են փողոցների ասֆալտբետոնյա ծածկույթների քայքայված տեղամասերի փոսային նորոգման և ճաքալցման աշխատանքները: Աշխատանքների մեկնարկը տրվել է քաղաքի գլխավոր՝ Նաիրյան փողոցից, որին հաջորդել են Սայաթ-Նովա, Ս. Սևանեցի, Նալբանդյան, Հրազդան, Էներգետիկների, Խաղաղության, Շինարարների, Աբովյան, Մյասնիկյան, Չարենց, Գագարին գյուղի Թումանյան, Կոմիտաս, Երիտասարդական փողոցները: Աշխատանքների ընդհանուր ծավալն ընդգրկել է շուրջ 1631քմ, որն իրականացվել է համայնքային բյուջեի միջոցներով:

Մեկտասնյակից ավել փողոցներում և հրապարակներում արդեն մեկնարկել են գծանշման աշխատանքները:

Այս տարի ճանապարհաշինական ծրագրերից ևս մեկը կդառնա իրողություն, որը տասնամյակներ շարունակ եղել է օրակարգային և խիստ հրատապ: Շուտով հիմնանորոգվելու է Մ-4 Ցամաքաբերդ-Գոմաձոր՝ 6,3 կմ-ոց ճանապարհահատվածը՝ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի շրջանակներում:

Գագարինում իրականացվում է «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագիրը

«Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի շրջանակներում այս օրերին Գագարին գյուղում իրականացվում են բարեկարգման աշխատանքներ:

Ծրագրային աշխատանքների հերթական հասցեն Գագարին գյուղի նորակառույց եկեղեցու շրջակայքն է, որը ներառում է բարեկարգման և ցանկապատման աշխատանքներ:

Աշխատանքներին ներգրավված է 8 անձ:

Մեկնարկը տրվել է հունիսի 20-ին, աշխատանքների ավարտ է նախատեսված հուլիսի 24-ը: Իրականացվող ծրագրի շնորհիվ նորակառույց եկեղեցու տարածքը կստանա նոր շունչ, ներկայանալի տեսք, որը միաժամանակ կդառնա հանգստի սպասված վայր:

Միաժամանակ լուծվում է 8 անձի ժամանակավոր զբաղվածության խնդիրը, որը ներկա պայմաններում ունի կենսական նշանակություն:

Ծրագրի արժեքը 1մլն. 500 հազ. դրամ է, որից 1մլն. 200 հազ. դրամը նախատեսված է աշխատավարձ: Համայնքային ներդրումը 10 տոկոս է:

Բարեգործական ծրագրերի շրջանակներում

Մարտի 8-ին ընդառաջ Սևան համայնքի և Սևանի տարածաշրջանի՝ այս տարվա հունվար-փետրվար ամիսներին փոքրիկներ լույս աշխարհ բերած և առաջիկա մի քանի ամիսներին մայրացող կանանց համար նախապատրաստվել էր հաճելի ու սպասված անակնկալ՝ տրամադրելով նորածինների և ապագա մայրերի համար 140 փաթեթ:

Անակնկալն իրականացվեց Focus on Children Now /Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ/ բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ և բարեգործական ծրագրերի շրջանակներում՝ նախաձեռնությամբ Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի:

Կազմակերպության և համայնքի համագործակցության արդյունքում խաղահրապարակ է կահավորվել Գագարինի մանկապարտեզում, տեղադրվել են նախադպրոցական տարիքին համապատասխան խաղամիջոցներ: Համայնքային ներդրումը 260.000 դրամ է:

Նախատեսված է խաղահրապարակի բարեկարգում և կահավորում նաև թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզում, որտեղ ամիսներ առաջ կազմակերպության կողմից տրամադրվել է սպիտակեղեն:

Մեկ ամիս առաջ մեկը մյուսին հաջորդեցին «Հայ դպրոց» հիմնադրամի բարեսիրական ծրագրերը, որոնց հասցեատերերը Սևան համայնքի նախադպրոցական և հանրակրթական հաստատություններն էին:

Սևան համայնքի հետ ընկերացած հիմնադրամը, որ գործում է ԱՄՆ-ում, անհրաժեշտ ու սպասված իր նվիրատվություններով համալրում է ոչ միայն մանկական օջախների և դպրոցների գույքը, այլ նաև լավատեսություն է հաղորդում մեծ ու փոքրին:

Նվիրատվությունների մեկնարկը տրվեց Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզից, որտեղ նվիրատվության հերթական խմբաքանակը հասավ հասցեատերերին՝ 124 մանկական աթոռ, 31 սեղան, 4 տեղանոց 31 զգեստապահարան, ուսուցչական սեղան-աթոռներ:

«ԱՅԳ» հիմնադրամն էլ /Բոստոն-ԱՄՆ Հայաստանի ներկայացուցչություն/ նվիրաբերել է 65 մահճակալ, որից 35-ը՝ «Բողբոջ» մանկապարտեզին, մնացածը՝ Գագարինի մանկապարտեզին:

«Հայ դպրոց» հիմնադրամը հաճելի անակնկալ էր պատրաստել ոչ միայն ավագ դպրոցի համար, այլ նաև Սևանի թիվ 5 միջնակարգ դպրոցի և դպրոցի հենքի վրա գործող նախակրթարանի աշակերտների և սաների համար, ովքեր ևս ստացել նոր գույք:

«ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագրի շրջանակներում

Սևան համայնքում իրականացվում է «ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագիրը՝ ԵՄ համաֆինանսավորմամբ, որը մեկնարկել է 2018թ-ին:

Ծրագրի նպատակն է զբաղվածության, որակի, կայունության, անվտանգության և աշխատաշուկայի որակական աճի վրա բազմակողմանի ազդեցության միջոցով նպաստել համայնքում և ողջ տարածաշրջանում կայուն տնտեսական աճի արձանագրմանը:

Սևանն անդամակցում է «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» ծրագրին և դրա շրջանակներում էլ ներկայացրել է հաջողված և մրցունակ առաջարկ:

Բիզնես կենտրոնի միջոցով իրականացվող ծրագիրն էլ հավակնում է ունենալ տեսանելի արդյունք, քանի որ առաջնահերթություններ են ընտրված մի շարք կարևոր ուղղություններ՝ ֆիզիկական ենթակառուցվածքների տրամադրում բիզնես համայնքին, համագործակցություն և կապերի ուժեղացում խորհրդատվական և տեխնիկական աջակցություն գործարարներին և աշխատանք փնտրողներին:

Գեղարքունիքի մարզի համար այս կենտրոնը դարձել է ինկուբատոր, որտեղ ամեն օր մշակվում են գաղափարներ ու տարածվում:

Սևան համայնքը ծրագիրն իրականացնում է Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատի հետ:

«ԵՄ-ն Սևանի համար՝ բիզնեսի զարգացման և նորամուծության ՓՄՁ հարթակ» ծրագրի շրջանակներում այս տարվա փետրվար ամսին, հաշվի առնելով Սևան համայնքի ակտիվ մասնակցությունը ծրագրին և դրամաշնորհային ծրագրի հաջող իրականացումը, հրավիրվել եմ Լատվիա՝ ծանոթանալու ԵՄ Արևելյան գործընկերության երկրների ՀՀՏՁ անդամակցող համայնքների տնտեսական զարգացման բնագավառում Լատվիայի փորձառությանը:

Ուսուցողական այցի շրջանակներում եղել եմ հանդիպումներ տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների միությունների և պետական կառավարման մարմինների պաշտոնատար անձանց հետ:

Ընդլայնվել է գիշերային լուսավորության ցանցը

Կարևորելով գիշերային Սևանի անվտանգությունն ու հարմարավետությունը՝ 2020թ-ին ևս շարունակվեցին լուսավորության ցանցի ընդլայնման և անխափան շահագործման աշխատանքները:

Այդ աշխատանքների համար համայնքային բյուջեից տրամադրվել է 1մլն. 500 հազ. դրամ:

Լուսավորության ցանցի ընդլայնմամբ Սևան համայնքի երեկոներն ու գիշերներն կլինեն լուսավոր, փողոցներն ու բակերը կդառնան ապահով, մարդկանց շարժն ու ավտոմեքենաների երթևեկը՝ անվտանգ: Միաժամանակ LED լամպերի տեղադրմամբ և փոխարինմամբ համայնքային բյուջեի խնայողություններն այս ոլորտում կլինեն տեսանելի:

Բնակֆոնդի պահպանությունն առաջնահերթություն է

2003թ-ից բնակարանային տնտեսության կառավարումը իրականացվում է համատիրությունների միջոցով:

Համայնքում գործում է 5 համատիրություն, որից մեկը՝ Գագարինում: Դրանց միջոցով իրականացվում է 213 բազմաբնակարան շենքերի կառավարումը, սպասարկումն ու պահպանումը:

Շենքերի զգալի մասը մեկից ավելի հիմնախնդիրներ ունի՝ սկսած տանիքներից մինչև ներքին խողովակաշարեր, որոնց ուղղությամբ իրականացվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Իհարկե, դեռևս հեռու ենք շոշափելի արդյունքներից, սակայն տեղական իշխանությունները ձգտում են և ֆինանսական ներդրումների շնորհիվ և կազմակերպչական հարցերը լուծելիս կանգնել համատիրությունների նախագահների կողքին:

Չնայած համայնքապետարանն իր գործառույթների շրջանակներում իրավասու չէ նման խնդիրները լուծելու, շենքերն էլ համատիրության կազմում են, և բնակիչներն ունեն իրենց ոչ միայն իրավունքներ, այլ նաև պարտականություններ, սակայն հաշվի

առնելով սոցիալական վիճակը, բնակչին չենք կարող թողնել իրենց խնդիրներին դեմ առ դեմ:

Շատ եմ կարևորում այն հանգամանքը, որ համատիրությունների նախագահները իրենց գործունեության ընթացքում ոչ միայն մշտական կապի մեջ լինեն տեղական իշխանության հետ, այլ նաև բնակիչների՝ իրենց աշխատանքները դարձնելով թափանցիկ, հաշվետվողական: Աշխատանքային փորձը և շփումները ցույց են տալիս, որ բնակիչը իրեն չի զգում շենքի սեփականատեր: Դրա վկայությունն է նաև բաժնային սեփականության պահպանման նպատակով նախատեսված հավաքագրումների ցածր մակարդակը:

Բազմաբնակարան շենքերի համատեքստում կա ևս մեկ խնդիր՝ կապված բազմահարկ 29 շենքերի հետ, որոնք վերաբերում են վերելակների սպասարկմանը և գործարկմանը:

Համայնքապետարանը խնդրին լուծում տալու նպատակով, վերելակների անվտանգ և անխափան գործարկումն ապահովելու համար վերելակների սպասարկման գործառույթները հանձնել է «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին:

Համայնքում բնակֆոնդին վերաբերող խնդիրների մեջ առանձնանում է տանիքաշինությունը: Չնայած համայնքի կողմից իրականացվում են տանիքների մասնակի նորոգման աշխատանքներ, սակայն դրանք բավարար չեն այս առաջնահերթությունը լուծելու համար: Դիմել ենք Գեղարքունիքի մարզպետարան՝ հատկապես խիստ վթարային տանիքների հիմնանորոգումը պետական ծրագրերում ներառելու համար:

Լուրջ խնդիր է նաև Նաիրյան 179 շենքի առկա վիճակը, որը ճանաչվել է 3-րդ աստիճանի վթարային: Շենքի ամրացման վերաբերյալ ընթանում են քննարկումներ, սակայն առանց պետական աջակցության հնարավոր չէ խնդրին տալ լիարժեք լուծում:

Բնակֆոնդի պահպանությունը համայնքային առաջնահերթություններից է, և չնայած այն հանգամանքին, որ բազմաբնակարան շենքերը գտնվում են համատիրությունների կազմի մեջ, տեղական իշխանությունները մշակել են ծրագրեր, որոնց շնորհիվ լուծվում են շենքերի հետ կապված առկա խնդիրները:

Մասնավորապես՝ ներկայացված աշխատանքների ծավալին տեղում ծանոթանալուց հետո հատկացվում է ֆինանսական աջակցություն կամ տրամադրվում է նյութատեխնիկական օգնություն: Երկու տասնյակից ավել շենքերում մի քանի ամսվա ընթացքում հնարավոր է եղել լուծել տարիներով կուտակված մի շարք խնդիրներ:

Խաղաղության փողոց 8 /3-րդ մուտք/ - կոյուղագծերի նորոգում.

Նաիրյան 150 - տանիքի վերանորոգում.

Նալբանդյան 63 շենք, 4-րդ մուտք - տանիքի մասնակի վերանորոգում.

Նաիրյան 153 - ջրագծի նորոգում

Էներգետիկների 1-ին շենք, 2-րդ մուտք - կոյուղագծի փոխարինում մինչև դիտահոր

Գործարանային 2, Սարգիս Սևանեցի 13, 23, Խաղաղության 14, շենքերի մուտքերում գտնվող - ջրագծերի նորոգում և խողովակների ջերմամեկուսացում

Նալբանդյան 34 - 1-ին մուտքի կոյուղագծի նորոգում

Նալբանդյան 42 շենքի նկուղային հարկի ջրագծի և կոյուղագծի վերանորոգում

Ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում

Սևան համայնքին Գրենոբլի քաղաքապետարանի և տեղի հայ համայնքի կողմից նվիրաբերված երկու ավտոբուսները այս տարվա հունիսին հասան Սևան քաղաք:

Հիշյալ ավտոբուսները ծառայելու են Սևան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին՝ ապահովելով նրանց փոխադրումը Սևան-Երևան-Սևան ուղղություններով:

Ավտոբուսների փոխադրման ծախսը հոգացել է Գրենոբլի Հայկական մշակույթի տունը: Յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի տեղափոխման ծախսը կազմում է 7500 եվրո, ընդհանուրը՝ 15000 եվրո:

Չնայած կորոնավիրուսի համավարակին՝ Սևան համայնքի երեխաներն ու երիտասարդները կրկին՝ արդեն 10-րդ անգամ, հնարավորություն կունենան ֆրանսերեն լեզվով առաջին քայլերն անելու կամ արդեն իսկ ունեցած գիտելիքները խորացնելու:

ՍԵՎԱՆԻ և ԳՐԵՆՈԲԼԻ քաղաքապետարանների միջև ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում 2020թ. հունիսի 22-ին մեկնարկել են ֆրանսերեն լեզվի անվճար դասընթացները:

Համավարակով պայմանավորված այս տարի դասերն անցկացվում են առցանց եղանակով՝ «ՖՐԱՆՍ-ՖՈՐՄԱՍԻՈՆ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ»-ի դասախոսների կողմից:

Մաքուր Սևան

Համայնքի համար կենսական նշանակություն ունի կոմունալ տնտեսության բնականոն գործունեությունը: Մենք այս ոլորտում ունենք կոնկրետ նպատակներ՝ ունենալ այնպիսի կառույց, որը կհամակարգի կոմունալ տնտեսության ոլորտի գործառույթները՝ աղբահանումից մինչև կանաչապատում, սանմաքրման աշխատանքների կազմակերպումից մինչև լուսավորության ցանցի գործարկում:

Կոմունալ տնտեսության աշխատանքներում գրանցվել են էական տեղաշարժեր:

Ձմռան ամիսներին իրականացվող աշխատանքների առանցքում ձյան մաքրումն ու տեղափոխումն էր:

Ուշադրության կենտրոնում համայնքի ողջ տարածքն էր՝ գլխավոր փողոցից մինչև երկրորդական փողոցներ, Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերը, Գագարին գյուղը: Ձնամաքրման աշխատանքները շարունակվել են նաև հանգստյան օրերին: Ձյան տեղումներին զուգահեռ իրականացվել է մաքրման գործընթացը:

Մաքրմանը հաջորդել է ճանապարհների՝ ավազով մշակման գործընթացը, որի արդյունքում երթևեկության և հետիոտնի տեղաշարժի համար ապահովվել է բնականոն վիճակ:

Գարնանը աշխատանքների ուղղվածությունը փոխվել է՝ առանցքում մնալով մաքրությունը: Էտման և սանիտարական հատման աշխատանքներին հաջորդել են ծառերի բների սպիտակեցման, կանաչ տարածքների խնամքի, ձևավորման աշխատանքները:

Կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպման նպատակով համայնքային բյուջեից հատկացվել է 62մլն. 528 հազ. դրամ՝ սանմաքրման, աղբահանության իրականացման, կանաչապատման, գիշերային լուսավորության ցանցի շահագործման, վերելակների գործարկման և ընթացիկ այլ աշխատանքների համար: Աղբահանության ծառայությունների դիմաց հավաքագրվել է 19մլն. 066 հազ. դրամ դրամ:

Սևանում գործելու է մանկական վերականգնողական կենտրոն

2019թ.-ից Ջինիշյան հիշատակի հիմնադրամի աջակցությամբ Սևան քաղաքում մեկնարկել են մանկական վերականգնողական կենտրոնի գործարկման աշխատանքները: Համայնքի ավագանու կողմից անհատույց տարածք է հատկացվել կենտրոնի գործունեության համար: Երկամյա ծրագրից հետո՝ 2021թվականից առողջապահության նախարարությունը իր վրա կվերցնի այդ կենտրոնի ֆինանսավորումը:

Այդպիսով, Սևանի տարածաշրջանի մոտ 100 երեխաներ կստանան իրենց անհրաժեշտ վերականգնողական բուժօգնությունը հենց տեղում:

Ծրագրի թիրախը Սևան համայնքն է և տարածաշրջանի գյուղական համայնքները:

Կենտրոնի հիմնական գործառույթներն են մասնագիտացված ցերեկային խնամքի կենտրոնի միջոցով հաշմանդամություն և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների համար մասնագիտացված աշխատանքների իրականացում, որի շնորհիվ էականորեն կբարելավվի նրանց կյանքի որակը: Կենտրոնում աշխատելու է 12 հոգուց բաղկացած անձնակազմ: Այս օրերին իրականացվում են տարածքի բարեկարգմանն ուղղված շինաշխատանքները, ինչպես նաև աշխատող անձնակազմի ընտրության փուլը:

Սոցիալական ծրագրերի շարքում առանցքային է աջակցության տրամադրումը սոցիալապես անապահով խավին:

2020թ. 1-ին կիսամյակում համայնքի կողմից սոցիալական աջակցության գումարը կազմել է 3մլն. 689 հազ. դրամ:

Փաստաթղթաշրջանառություն

Ընթացիկ տարին էականորեն տարբերվում է նախորդներից: Կորոնավիրուսային համավարակը գարնան սկզբից հանրապետությունում թելադրեց իր կանոնները, իսկ մարտի 16-ից հայտարարված արտակարգ դրությունը՝ աշխատանքային նոր ռեժիմ ու պայմաններ:

Սևանի համայնքապետարանը ևս անցել է աշխատանքային արտակարգ ռեժիմի, որն անդրադառնում է նաև ստացվող և ուղարկվող դիմումների, գրությունների բովանդակությանը, ստացման եղանակներին:

Սևանի համայնքապետարանում ամփոփվել են ընթացիկ տարվա կիսամյակային արդյունքները: Համաձայն համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից տրամադրված ամփոփագրերի՝ վեց ամիսների ընթացքում քաղաքացիների, բնակիչների կողմից համայնքի ղեկավարին է հասցեագրվել 571 դիմում, որոնք ներառում են տարբեր խնդիրներ, հարցեր և առաջարկներ՝ սոցիալականից մինչև արտոնությունների սահմանում, կենցաղային խնդիրներից մինչև հասցեի տրամադրում, գույքահարկի բազայում փոփոխություններից մինչև շինթույլտվություն:

Այս տարվա դիմումների զգալի մասը բովանդակությունը, պայմանավորված առկա վիճակով առավել շատ սոցիալական ուղղվածություն է ունեցել: Դեռևս մարտ ամսից Սևանի համայնքապետարանը կազմակերպեց իրազեկման արշավ՝ բնակիչներին և քաղաքացիներին ուղղորդելով օգտվել համայնքապետարան դիմելու առցանց եղանակից:

Փաստում ենք, որ քաղաքացիների և բնակիչների՝ համայնքապետարան մուտքի սահմանափակման արդյունքում ավելացել է առցանց դիմումների թիվը /դիմումներն ուղարկվել են պաշտոնական կայքէջին և ֆեյսբուքյան էջին/: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բնակիչների և քաղաքացիների կողմից համայնքապետարան մուտքագրված դիմումների թիվը եղել է 650:

ՀՀ կառավարությունից և գերատեսչություններից, տարբեր կազմակերպություններից ստացվել է 344 գրություն, որոնց գործող կարգի համաձայն, տրվել են պատասխաններ, ուղարկվել են ակնկալվող տեղեկատվություններ, համայնքին վերաբերող տվյալներ:

Ստացված գրությունների մեջ առանձնացել են կորոնավիրուսի համավարակով, արտակարգ դրությամբ պայմանավորված և կոնկրետ ուղղվածություն ունեցող գրություններն ու հանձնարարականները:

Անցյալ տարի հունվար - հունիս ամիսներին մուտքագրված գրությունների թիվը եղել է 382: Իրավաբանական անձանցից, համայնքում գործող կազմակերպությունների, ընկերությունների կողմից համայնքապետարան է մուտքագրվել 355 գրություն: 2019-ի նույն ժամանակահատվածում այդ թիվը եղել է 364: Համայնքապետարանից ուղարկված գրությունների վիճակագրությունն այսպիսին է՝ համայնքի ներսում՝ 222, համայնքից դուրս՝ 288 գրություն: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում համապատասխանաբար՝ 250 և 291:

Սևանի համայնքապետարան գրությունները, դիմումները, տեղեկատվության հարցումներն ստացվել և ուղարկվել են փոստով, էլեկտրոնային տարբերակով, ավելի քիչ՝ առձեռն:

Ավագանին կայացրել է 26 որոշում, համայնքի ղեկավարը՝ 336

Տեղական ինքնակառավարումն առանց ավագանու գործունեության չի կարող լինել լիարժեք: Մենք խնդիր ունենք առավել համագործակցված և լայնաշերտ աշխատելու ավագանու հետ, որպեսզի կայացրած որոշումներն էլ լինեն արդյունավետ և նպաստեն համայնքային կյանքի բոլոր ոլորտների բնականոն աշխատանքին:

2020-ի 1-ին կիսամյակում համայնքի ավագանին գումարել է 3 նիստ, կայացրել է 26 որոշում:

Ավագանու գործունեության թափանցիկության և հրապարակայնության նպատակով նիստերը հեռարձակվում են առցանց, ապա տեղադրվում պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Իմ կողմից կայացրել եմ 336 որոշում:

Անցկացվել է 2 հանրային քննարկում:

Սևանի համայնքապետարանի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի Համայնքների միության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված առցանց վեբինարներին և աշխատաժողովներին:

Համատեղ ծրագրեր

Համայնքապետարանը համագործակցում է համայնքում գործող ՀԿ-ների հետ, որի արդյունքում կյանքի են կոչվում մի շարք ծրագրեր: Մասնավորապես՝ Սևանում իրականացվում է «Ճամփի ընկեր» ծրագիրը, որը «Սևան» երիտասարդական ակումբ» ՀԿ-ի հերթական նախաձեռնություններից է:

Հայտարարված մրցույթի և դրան հաջորդած քննարկումների արդյունքում Սևան քաղաքի տարբեր հատվածներում տեղադրվելու են 10-13 տեղեկատվական և 3 քարտեզային ցուցանակներ, որոնք իրենց յուրօրինակությամբ նոր տեսք են տալու քաղաքին և դյուրացնելու են քաղաքում կողմնորշվելը:

Տեղադրվելու է նաև տեղեկտավական պատ, որը նախատեսված է լինելու զբոսաշրջային կառույցների հայտարարությունների համար:

Քաղաքային զբոսայգում կառուցվել է փառատոնային բեմ, որին հաջորդելու է կից ենթակառուցվածքների կառուցումը:

Այս տարածքը դառնալու է փառատոների կազմակերպման և հանգստի անցկացման վայր:

Սևանի համայնքապետարանը մասնակցել է «ԵՄ Կայուն էներգիայի շաբաթ-2020» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին և համայնքում հայտարարել է երկու մրցույթ՝ նկարչական և լուսանկարչական աշխատանքների:

Մրցանակակիրները կպարգևատրվեն համայնքապետարանի կողմից և հավաստագրեր կստանան «Քաղաքապետերի դաշնագրի» ծրագրի կողմից:

Համայնքը՝ արտակարգ դրության օրերին

Դեռևս մարտի 12-ին, պայմանավորված նոր կորոնավիրուսային համավարակով, համայնքապետարանում ստեղծվել է մասնագիտական թիմ, իսկ մարտի 16-ից՝ արտակարգ դրության հաստատման օրվանից, համայնքապետարանն անցել է աշխատանքային արտակարգ ռեժիմի՝ համագործակցելով համապատասխան կառույցների հետ:

Ինչպես համայնքում, այնպես էլ համայնքապետարանում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ հետևելով Պարետին ցուցումներին և առողջապահության նախարարության հրահանգներին:

Միջոցառումներն ընդգրկել են մի շարք ուղղություններ՝ ախտահանման աշխատանքներ, իրազեկման արշավներ, աշխատանքների վերակազմակերպում: Ակտիվորեն աշխատել ենք բարեգործական կազմակերպությունների, բարերարների հետ: Համայնքի սոցիալապես անապահով մի շարք ընտանիքներին տրամադրվել են սննդի, հիգիենայի փաթեթներ, Գեղարքունիքի մարզպետարանի և համայնքի կողմից սոցիալական աջակցություն, կազմակերպվել է ինքնամեկուսացված 100 անձանց սննդի և հիգիենայի պարագաների տրամադրման գործընթացը:

Մշտապես համագործակցում ենք բժշկական կենտրոնի, տեսչական մարմինների, Գեղարքունիքի մարզպետարանի հետ, իրականացնում ենք համատեղ այցեր, կազմակերպում համատեղ այցեր, տեղեկատվության փոխանակում:

Համայնքում գործող ՆՈՒՀ-երի և արտադպրոցական հիմնարկների աշխատանքը և պարապմունքները մարտից դադարեցվել են, սակայն «Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը անցել է հեռավար ուսուցման:

Մանկապարտեզների դաստիարակները ևս մարտ-մայիս ամիսներին կազմակերպել են հեռավար պարապմունքներ:

Արտակարգ դրության ժամանակ սահմանափակվել են միջոցառումների կազմակերպումը, դրանք կրել են պաշտոնական բնույթ:

Առաջնահերթություն է տրվել հաշվետվողականությանը

Թափանցիկ աշխատառճի ձևավորման ճանապարհին իրականացվող ծրագրերի շարքում առանձնանում է համայնքապետարանում գործող «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը, որն առավել ամբողջական և համակարգված է դարձնում իրականացվող աշխատանքները:

Համայնք-մարզպետարան-կառավարություն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային տարբերակը թույլ է տալիս աշխատանքները դարձնել առավել որակյալ, ռավել սեղմ ժամկետում փոխանցել համապատասխան տեղեկատվությունը:

Համայնքն ունի իր պաշտոնական կայքէջը և ֆեյսբուքյան էջը:

Տեղական իշխանությունն իր աշխատանքները կառուցում է՝ գերակա համարելով համայնքապահպան ու համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը: